

ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ՏՆՕՐԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՏԵՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ



ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. ՇՐՋԱՆ

1900 ՅՈՒՆՈՒԱՐ 1

ԹԻՒ ԴԵ

„هارة كيداق“ عزه تسي

HANRAKIDAGUE
JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Ղրշ.
Դաւառաց համար	60 »
Արտասահման	15 Ֆրք.

ՍԵՐ ՊԱՏ. ԲԱԺԱՆՈՐԴԱՅ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԶՐԻ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն

Քաղ. Պատմ. Ժամանակակից Եւրոպիոյ

Արարչագործութիւն կամ Աշխարհածնութիւն Ա. Լ.

Իմ հաւատքս

ԹԵՈՂԻԿ

Երկրագործութիւն

Քաղաքական Տեսութիւն

Յիշատակ

ՄԵԼՔՈՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Սիրոյ Իտեալը (Բանաստեղծութիւն)

Ա. Լ.

40 փարայ 40

Տպագր. «ԾԱՂԻԿ» Օրաթերթի
Կ. Պոլիս, Ղալաթիա, Համուի. Փալա Խան

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

1900-1901

CHICAGO, ILL.

1900

1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900

1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

1900-1901

ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

ԼՐԱՔԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

ԽՐԱԳՐԱՊԵՏ

ՏՆՕՐԷՆ

ԵՐՈՒԱՆԻ ՏԵՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ



ԲԻԻԶԱՆԻ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. ՇՐՋԱՆ

1900 ՅՈՒՆՈՒԱՐ 1

ԹԵՒ ԳԾ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պատրիարքարանի գործունեությունը. — Գաւառային գործերը. — Առաջնորդներուն ընթացքը. — Կրթական խնդիրը. — Պատրիարքարանի ելմտացոյցը:

Այսօր կ'սկսի նոր տարին. 1899 ի քաղցրութիւններն ալ, դառնութիւններն ալ թաղուեցան երէկ գիշերուան մութին մէջ: 1900 ի արշալոյսը կը ծագի այսօր բոլորովին անստոյգ պայծառութեամբ: Զի գիտցուիր թէ նոր տարին իր ծալքերուն մէջ ի՞նչ վերապահած է անհատներուն կամ ժողովրդոց: Յետքեզ կրուկն հայեացք մը միշտ աւելի լիւրին է քան մարգարէական ակնարկներ ապագայ օրերուն, ամիսներուն վրայ: Ո՛չ մէկուն տրուած է թափանցել իսկապէս 1900 ի ծոցին մէջ, ու պրպակն անոր գաղտնիքներն ազգային, քաղաքական կեանքերուն տեսակէտով: Ամէն երկիրներու մամուլն ալ այսպիսի խորհրդածութիւններ միայն կը ներշնչէ նոր տարին սեմին վրայ: Մեք անցելոյն վրայ ունինք շատ բաներ ըսելիք, ո՛րքան ալ լուրթիւնը սիրելի ըլլայ կամ ստիպու-

ղական. հետեւաբար չենք ուզեր նոյն իսկ 1900 ի ակնկալութեանց, հաւանական մխիթարութեանց, յուսախաբութեանց, անհատական, տոհմային երեւոյթներուն վրայ ճառել:

Ի՞նչ որ ալ ըսուի ճշմարիտ արդիւնքներու տեսակէտով, մեք չենք կրնար ուրանալ թէ տարին համակ, այո՛, 1899 տարին ամբողջ գործունէութեան ժամանակամիջոց մ'եղաւ Ազգ. Պատրիարքարանի համար: Ոչ ոք կրնայ կասկածի ներքեւ ձգել ո՞ւր պարագան թէ Պատրիարքարանը փութոյ պնդութեամբ հետամուտ եղաւ օրակարգի անհրաժեշտ խնդիրներուն: Երեւոյթներն այնքան աննպաստ, անտեսական վիճակն այնքան միջին էին որ շատեր նոյն իսկ չէին ըսպասեր թէ Պատրիարքարանի գործունէութիւնը պիտի տեւէր բաւէր մինչեւ 1900 ի դուռը: Բայց տեւեց բաւեց, ժողովներն իրենց սովորական կարգապահութեամբ վարեցին գործերը, հոգ չէ թէ անոնց նիստերուն արդիւնքը չարտափայլեց շրջուցիչ եղանակաւ: Բայց հաւաքուեցան ամէն շաբաթ. խորհրդակցեցան, ի՞նչ որ կրնային ընել, ըրին իրաւցնէ. բայց ամէնէն վառվառն մար-

դոյ անգամ սրուած չէ յագուրդ տալ իրենց անհամբերութեան, և պէտք է գիտնալ թէ ժողովարութիւնը մեծ առաքինութիւն մ'է, և բարի նախնեաց պատուէրը թէ «ուսելու, խմելու մէջ չափաւորութիւն պէտք է» ճշմարիտ է նաեւ բարոյական և այլաբանական սեռակէտով: Արդիւնքներ կան զորս չենք կրնար տեսնել առաջին, երկրորդ, նոյն իսկ երրորդ ակնարկներով: պէտքերն ա՛յնքան շատ կամ ստիպողական են որ ու է չըջանալի մէջ ձեռք անցուած արդիւնք մը — ըստ ինքեան բարիք մը — աննկատ կ'անցնի, դրեթէ չի տեսնուիր, մանաւանդ անոնց համար՝ որք հեռու կ'ապրին կամ անտարբեր կը մընան, կէս ճամբան յուսահատելով ու է աղբիւնքէ: Բայց անոնք որք ուղղակի գործին մէջ են, կը խորհին, կը խորհրդակցին Պատրիարքարանի, թեմօրէից, թաղերու վարչական, կրթական, յարաբերական կարգադրութեանց համար, դժուարութիւններն ու նրբութիւնները շօշափած ըլլալով, եթէ կարելի է այսպէս ըսել. անոնք գոհ կը մնան իրաւամբ առնուած սակաւութիւ քայլերէն:

Պատրիարքարանն անցեալ տարւոյ բովանդակ շրջանին մէջ մանաւանդ զբաղեցաւ թեմական կամ գաւառային գործերով: Նպաստի գործը մասնաւորապէս իրեն մէջ սուղեց Ս. Պատրիարքի գործունէութենէն ստուար մաս մը. ամենօրեայ զբաղում մ'եղաւ այն Ն. Սրբադնութեան և իր օժանդակներուն համար: Այս պովութիւն ամէն օր արդէն կը գրուէր ազգային օրագրութեան մէջ: Այս պատճառաւ է որ Պատրիարքարանը չկրցաւ բնաւ զբաղիլ կրթական խնդրով: Հացին անողոք պէտքը ստոյգ է որ բոլորովին աննշան դիւրի մը մէջ թողուց խնդիրը զոր Ուսումնական խորհուրդ մը, մերթ յափսիթերս խաղալով մերթ յոտընկերիս ժամանելով, ծեծեց ու ծեծեց, և ա՛յնքան կը զօրանար իր յոյսը կամ արիւթիւնը, որքան երթալով ամբողջութեան կը դառա-

պարտուէին իր որոշումներ: Չենք կրնար Պատրիարքարանը մեղադրել ուղղակի կրթական խնդրով չզբաղելուն համար: Իր ուսերէն վեր բեռներ ունէրնաւ խիղճն ու պարագայք կը մղէին զինքն աւելի կարեւորութիւն տալ գաւառային ստոյգ կամ անստոյգ լուրերուն, որք տնտեսական ծանր կացութիւն մը կը տեղեկագրէին: Գաւառի անսպառ պահանջներուն հանդէպ Պատրիարք և վարչութիւն ստիպուած էին խորհրդակցիլ շարունակ ու դիմումներ ընել: Հարցում մը բնական է հոս. Առաջնորդներն իրենց պարտքը կատարեցի՞ն, կարծեմ թէ Առաջնորդներն աւելի տեղեկագրուի դեր միայն կատարեցին, տխուր պարտականութիւն մ'է այս ալ, դժբաղդ պահանջներու դեր կատարեցին մեր Առաջնորդները. կա՛մ առաւօտեան նախաճաշէն կա՛մ երեկոյեան ընթրիքէն ետք սկսան գրել միայն, իրենց կարօտութիւնները թուել եւ Պատրիարքարանէն նպաստ խնդրել: Չենք մեղադրեր զիրենք որ բախտին կողմէ այդ տխուր պարտքը կատարելու կոշուեցան, բայց կը հարցնենք թէ Առաջնորդները չէի՞ն կրնար տեղւոյն վրայ իրենք ալ քիչ մը աւելի դիւրսցնել վարչութեան գործը: Երեմիական ողբեր յերկրեցին շարունակ, հրաժարել սպառնացան, բայց ա՛յնքան Միամիտ ենք որ առիթը չենք ուզեր փախցնել թէ իրենց ձեռնհասութեան մեծ ապացոյց մը տուի՞ն արդեօք: Տ. Բաբգէն միայն Մշտնհիներուն դատը պաշտպանեց իր պաշտօնատեղին հասնելէն անմիջապէս ետք, և պատճառ տուաւ որ 1899 տարւոյ վերջին եռամսեայ միջոցը լրագրութեան մէջ յատկանար պայքարի մը, որ ամուլ ըլլալու սահմանուած էր, քանի որ ժամանակը չէր, փութկոտութիւն էր, եւ ուրիշ իրական պէտքեր կային:

Քանի որ նոր տարիին առթիւ նոր գործունէութիւն մը կ'սպասուի Պատրիարքարանէն կրթական գործի համար, ներելի է մեզ յուսալ որ վարչութիւնն իր ելմտացոյցը պիտի դնէ ա՛յնպիսի հաւասարակշռութեան մը մէջ որ կարենայ օգնել նաեւ մասամբ կրթական գործին: Կ'ըսուի թէ ելմտացոյց ըսուած բանը ծակ կարաւ մէ, եթէ չկրնաս առաջ ունէ ամէն զգուշութիւն ընել: Կ'ըսուի թէ ելմտացոյց ըսուած բանն առաձգական խէժ մ'է: Քանի կ'ուզես կ'երկնայ, բոլոր աստիճան մ'ալ կուգայ որ կը պայթի: Մեր Պատրիարքարանի ելմտացոյցն ո՞ր տեսակէն է արդեօք: Զայն չինողնեւորը գիտեն անոր նիւթը: Ինչպէս դիւրին է գիտողութիւն ընել բայց ո՞րքան որ վստահ ըլլանք զայն չինողներուն բարեացակամութեան վրայ, աւելորդ չէ բռնաւ խնդրել որ հաճին ի նկատ առնել նաեւ ստիպիչ հարկը վարկ մը բանալու ա՛յդ ելմտացոյցին մէջ ինչպստ կրթական գործին: Եթէ անգամ մը ա՛յդ վարկ բացուի, «վստահ ենք որ արդեօք մեր տուած գրամն ի՞նչպէս կը գործածուի» ի ներքին հետաքրքրութիւնը պիտի մղէ զվարչութիւն աւելի հոգածու ըլլալու կրթական գործին, որ անհրաժեշտ խնամք կը պահանջէ միշտ: Կ'ըսուի իմէ— միշտ կ'ըսուի— Պատրիարքարանի ելմտացոյցը կարեւոր գումարներ նշանակած է անկարեւոր պէտքերու համար, զորս եթէ քիչ մը սեղմէ, քիչ մը չափաւորէ գոնէ, կրթական գործն ալ իր գլուխը կ'ունենայ ելմտացոյցին էջերուն վրայ: Ամականաւորները շատ են, կ'ըսուի, ա՛յնչպի որ մեք անգամ չենք կրնար գուրս ելնել այս «կ'ըսուի»ներուն տակէն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՒՐՈՊԻՈՅ

ԱՆԳԼԻԱ

Ժ.Փ. դարուն մէջ Անգլիա՝ է որ իբրեւ քաղաքական տիպար ծառայած է Եւրոպոյ: Անգլիացի ժողովուրդն է որ ստեղծած է ժամանակակից Եւրոպոյ քաղաքական յորինուածութիւնը կամ մեքենան: Միւս ազգերն ուրիշ բան չեն ըրած, բայց եթէ անոր հետեւած կամ նմանած են Կուսակցութիւնը (խորհրդարանական, արմատական, հանրապարական եւ այլն,) որք ժ.Փ. դարու քաղաքական կենաց սեփական են, նախ Անգլիոյ մէջ կազմուած են, միւս երկիրներուն մէջ յետեւան դալէ առաջ: Ուստի բնական է որ Անգլիայէ սկսիք Եւրոպոյ քաղաքական պատմութիւնը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱԽԿԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

«Մեծն Բրիտանիոյ եւ Իրլանտայի» միացեալ թագաւորութիւնը, 1814ին, երկար (1793էն ի վեր գրեթէ շարունակապէս) պատերազմէ մը դուրս կ'եղնէր, որ իր գաղթային կայսրութիւնն ընդարձակած եւ ներքին կազմակերպութիւնն ամրապնդած էր ժ.Փ. դարու «Հին Անգլիա» «Old England» կանգուն կը մնար առանց պէտք ունենալու վերականգնման: Անգլիոյ նախկին դրութիւնն ըմբռնելու համար, պէտք է գիտնալ անգլ. կառավարութեան կազմակերպութիւնը, անգլ. ընկերութեան կազմութիւնն եւ Իրլանտայի մասնաւոր վիճակը:

Մեծն Բրիտանիոյ քաղաքական կեանքը կը կեդրոնանար երեք խումբ նախկին հաստատութեանց մէջ, ո՞րքան ալ անոնք ի հնուց անտի միացած ու սնրածան թուէին: Ասոնք են կեդրոնական կառավարութիւնը, տեղային իշխանութիւնը, Եկեղեցին:

Կեդրոնական կառավարութիւնը. — Անգլիոյ կեդրոնական կառավարութիւնը, որ 1707էն ի վեր Սկոթլոյ եւ 1800էն ի վեր Իրլանտայի մէջ տարածուած էր, պաշտօնապէս կը բաղկանար երեք իշխանութիւններէ. թագաւորն իր Նախարարաց Խորհրդով, Լորտերու Ժողովը, եւ Երեսփ. Ժողովը: Ասոնք հնամեայ մարմիններ էին, ժ.Փ. դարէն

ի վեր կարծես աւանդական կազմակերպութեան մը մէջ թանձրացած: Թագաւորը, ժառանգական և անհպելի, Միացեալ թագաւորութեան պաշտօնական տէրը կը մնար: Իբրեւ Գլուխ Պետութեան, հաշտութիւն կը կընէր, պատերազմ կը հրատարակէր եւ դաշնագիրները կը կ'ստորագրէր: Իբրեւ «աղբիւր արդարութեան», դատաւորները կ'անուանէր, որք իր անուամբ կը վճռէին արդարութիւնը: Իբրեւ Պետ կառավարութեան, ինք կ'անուանէր բոլոր պաշտօնատարները, Խորհրդարանն ի նիստ կը գումարէր կամ կը լուծէր, եւ մտացոյցն ու օրինագիծերը կը ներկայացնէր, և օրէնքները կը վաւերացնէր: Ունէր նաեւ բոլոր նոյն իրաւունքները, զորս ունէին իր նախորդներ միջին դարու մէջ, և ունէր նաեւ իրեն իբրեւ աջակից Խորհուրդ մը որոյ անդամներն ինք կ'անուանէր:

Լորտերու ժողովը կը բաղկանար, ինչպէս միջին դարու մէջ, ժառանգական Լորտերէ եւ թագաւորէն հաստատուած նոր Լորտերէ որք սակայն իրենց տնտեսը կը փոխանցէին իրենց սերունդներուն: Լորտերու ժողովը նախկին ձեւերով կը գումարուէր:

Երեսփ. Ժողովն, որ եօթն տարուան տեւողութեան մը համար և նախկին ձեւերով ընտրուած երեսփոխաններէ կազմուած էր, վաղեմի սովորութեանց համաձայն կը վարէր: Երկու ժողովներն ալ նիստ կը գումարէին միեւնոյն տեղը, Ուէսթմինսթրի պալատան մէջ, եւ երկուքն ի միասին կը կազմէին Խորհրդարանը, «Բարլըման»:

Թագաւորին, Նախարարաց Խորհրդոյ եւ Խորհրդարանի իշխանութիւնը որոշուած, կարգադրուած էին («սովորութեամբ»): Անգլիացիք չունէին ո՛չ գրաւոր սահմանադրութիւն եւ ո՛չ քաղաքային օրինագիրք, եւ ասոր համար կը պանծային: Քաղաքական գործերու մէջ, իրենց առաջնորդ կը բռնէին նախընտաց դէպքերն ու աւանդութիւնը, ինչպէս քաղաքային կամ իրենց ներքին գործերուն մէջ ալ կը հետեւէին սովորութեան (common law):

Ըստ ձեւին, թագաւորը կառավարութեան միակ պետն էր, եւ ամէն բան անոր անուամբ կ'ըլլար: Խորհրդարանն անոր լոկ օժանդակն էր և մինչեւ իսկ չէր կրնար գումարուիլ առանց անոր հրամանին: Նախարարք անոր լոկ Խորհրդականներն էին: Բայց երեք սովորութիւններ, Ժ. Գարուն մէջ հաստատուած,

ուած, արմատապէս փոխեցին այս դրութիւնը:

1. Պետութեան գլուխն, որ ամէն իշխանութիւններն իր անձին վրայ կը միացնէր, անոնցմէ ոչ մին անձնապէս կը գործադրէր: Թագաւորէն ստորագրուած ո եւ է քաղաքական դաշնագիր պէտք էր ստորագրուէր նաեւ նախարարէ մը:

2.—Նախարարք ուրոյն ուրոյն չէին գործեր. նախարարաց Խորհուրդ կը գումարէին, կառավարութեան ընթացքն որոշելու համար: Նախարարաց Խորհուրդն, որ յանուն թագաւորին կառավարելու պաշտօնն էր, պետութեան գլխաւոր մարմինն եղած էր: Ըստ որում նախարարութիւնը պաշտօնական հաստատութիւն մը չէր, անոր անդամներուն թիւն ալ երբեք չէր որոշուած: (12էն մինչեւ 20 կը զանազանուէր): Ոմանք վաղեմի տնտեսներ կը կրէին, ինչպէս «Գանձարանի Լորտ», (անձնական նախարար) «Մեծ զիւանագլխի», «Ճատրակարանի զիւանագլխի» (chancelier de l'Echiquier) (Էրմոական նախարար և ըն), ոմանք ալ կը կոչուէին Պետական Քարտուղար secretaire d'Etat, (նախարար, ministre, անունը պաշտօնական չէր): Ժ. Գարէն ի վեր, Անգլիացիք նախարարութիւնը կամ դահլիճը կը նկատէին համերաշխ խումբ մը՝ կազմուած ա'յնպիսի մարդոցմէ որք որոշած էին հետեւիլ միեւնոյն աշխարհավարութեան: Անդամներէն մին պետ կը նկատուէր, և յանուն նախարարութեան խօսելու իրաւունք ունէր: Նախարարապետը թագաւորէն կը նշանակուէր, եւ ինքն ալ իր պաշտօնակիցները կ'ընտրէր:

3.— Թագաւորը թէեւ նախարարութիւնն ինք կ'ընտրէր, սակայն անձնապէս պատասխանատու չէր: Անգլ. սկզբունք մ'էր թէ Պետութեան Գլուխը չի կրնար գէշ գործ մ'ընել, և եթէ ընէր իսկ, պատճառը սա էր թէ իր նախարարները գէշ Խորհուրդ տուած էին: Սովորութիւնը կը պահանջէր նաեւ Լորտերու ժողովէն և Երեսփ. Ժողովէն հաւասար թուով նախարար առնել: Սյապէս երկրին կառավարութեան ղեկը թողուած էր նախարարութեան, եւ այս վերջինն ալ Երեսփոխան սկան Ժողովոյ մեծամասնութեան մէկ պատուիրակութիւնը դարձած էր: Երեսփ. Ժողովն ուղղակի ի գործ կը դնէր իշխանութիւնը: Եթէ Երեսփ.

ժողովն ելևառացոյցը քուէարկելու եւ օրէնքներ չինելու համար Լորտերուն գործակցելու իր սեփական իշխանութեամբ չատանար, ստորակարգ իշխանութիւն մը պիտի մնար ինչպէս որ այնպէս է Եւրոպոյ միապետութեանց մէջ (որպէս Բրուսիոյ կամ Աւստրիոյ մէջ):

Խորհրդարանական զրուիւնն, 1713էն 1760, պաշտօնավարած էր, երկու տասնին շօրճերուն օրով, բայց անոր կիրարկութիւնը դեռ վերջնական չէր դարձած. տեսական իսկ չէր ընդունուած, երբ շօրճ Գ. խնդրոյ տակ ձգեց զայն: Շօրճ Գ. ի նախորդները խորհրդարանի մեծամասնութեան ընտրած էին իրենց նախարարները, եւ անոնց թողած էին կառավարութեան ղեկը: Բայց այս ընթացք չէր փոխեր պետութեան գլխին օրինաւոր իրաւունքը զոր իր յաջորդը կրնար տարրեր կերպով գործածել: Շօրճ Գ., յանուն իր օրինաւոր իրաւանց, որոշեց ինքն անձամբ ի գործ դնել իր վեհապետական իշխանութիւնը, եւ իր երկարատեւ թագաւորութեան օրով, 1760էն մինչեւ 1820, նախկին զրուիւնն վերադարձաւ, եւ խորհրդարանական նոր սովորութիւններէն ոչ մին ընդունեց: Անձամբ կը նախագահէր Նախարարաց Խորհրդոյ, ըսելով թէ «Ինքն կ'ուզէր ըլլալ իր առաջին նախարարը» եւ չէր ուզեր ստորագրել այն տնօրինութիւններ որք անհաճոյ կը թուէին իրեն: Երկու նախարարութիւնք հրաժարեցան (1800 եւ 1806), վստահ չ'որճ Գ. չ'թողուց որ կաթոլիկներուն դէմ գրուած խիստ օրէնքները մեղմացնեն: Երկար ատեն փորձեց արդիւն որ նախարարութիւնն համասեռ չըլլայ, այսինքն միեւնոյն կուսակցութեանէն:

Երկար ժամանակ նախարարք պահպանողական «Թօրի» եղան եւ երկիրը կառավարեցին Շօրճ Գ. ի սկզբանց համաձայն: Շօրճ Գ. պահպանողականաց աջակցութեամբ, կրցաւ անձնական քաղաքականութիւն մը ունենալ, զոր ընդունել տուաւ նաեւ իր նախարարներուն: Եւ երբ իր որդին 1811ին փոխաւորեց իր հօր իբրեւ խնամակալ, եւ թագաւոր եղաւ՝ Շօրճ Գ. անուամբ, Անգլիա դեռ կը վարանէր երկու զրուիւննց միջեւ Պահպանողական կուսակցութիւնը կը պաշտպանէր ժողովրդական միապետութեան աւանդական վարդապետութիւնը, որ կառավարա-

կան գործերը հակահիշուելու ստորակարգ դեր մը կուտար խորհրդարանին, եւ նախարարներն ընտրելու եւ վարելու իշխանութիւնը կը ճանչնար, այսինքն անձնական կառավարութիւն մը հաստատելու գործնական միջոցը կ'ընձեռէր:

Ֆրանսայի դէմ մղուած երկարատեւ պատերազմներու միջոցին, ներքին պայքարները դադրած էին: Խորհրդարանը նախարարութեան խօսքէն դուրս չէր ելնել, եւ մինչեւ իսկ բացառիկ օրէնքներ քուէարկած էր ջախջախելու համար արմատական կուսակցութիւնը, որ 1793ի Ֆրանսական սկզբանց ջառագով կը հանդիսանար: Վաւերացուցած էր նաեւ Ֆրանսական վաճառականութեան դէմ ձեռք առնուած անօրինութիւնները, որք որոշուած էին «Նախարարաց Խորհրդոյ պարզ հրամանագրերով» (1806):

(Շարունակելի)

ԱՐԱՐԶԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Կ Ա Մ

ԱՇԽԱՐՀԱԾՆՈՒԹԻՒՆ

Թե ինչպէս ծնած է աշխարհքը կամ տիեզերքը եւ ինչպէս արարչագործութիւնը պիտի մեռնի կամ վախճանի:

Արարչագործութիւն ըսելով կը հասկընանք այն եղելութիւնը, որով Աստուծոյ բնոր էականերն ոչնչէն ստեղծեց: Սոյնպէս հասկցուած ստեղծագործութեան գաղափարն անձանօթ էր հեթանոսաց, որք իբրեւ սկզբունք կ'ընդունէին Ex nihilo nihil in nihilum nil posse reverti այսինքն «Ոչնչէն ոչինչը» Հեթանոս գիտուններէն ոմանք, ինչպէս Քսենոփոն, Պարմենիդ, կը պնդէին թէ «Երկիրը՝ նոյն իսկ իր ձեւին մէջ յաւիտենական է» Այլք, ինչպէս Լեւկիպոս, Դեմոկրիտ, Եպիկուրոս, կը վարդապետէին թէ «Հիւլէներու պատահարար իրարու հետ միանալէն» առաջ եկած, ստեղծուած է աշխարհքը: Ուրիշներ ալ, ինչպէս Հնդկ Պրահմանները, նոր Պրահմանք, կ'ըսէին թէ «Աշխարհք աստուածային բղիսում մ'է»: Աւելի խնամունքները, Ա-

նաքսաբուր, Առկրատ, Պղատոն, կ'ընդունելին թէ աշխարհք, թէեւ լր նիւթին մէջ յաւիտեան, այժմեան ձեւին վերածուելու համար գերազոյն կարգադրիչի մը կարօտ էր, զոր Պղատոն ՏԵՄԻՍՏՈՒՐԿ կը կոչէր։ Արդի փիլիսոփաներէն ոմանք, ինչպէս Աբինօզա, Շէլլինգ եւ բոլոր համաստեղածեանք, Աստուծոյ բացարձակապէս դատ ուրիշ գոյութիւն չեն ընդունիր։ Հետեւապէս կ'ուրանան ստեղծագործութիւնը։

Արարչագործութիւնն, ըստ Աստուծոջնչի, կը կայանայ սա՛ վարդապետութեան մէջ, որ կ'սկսի, «Իսկզբանէ արար Աստուծոյ զերկինս եւ զերկիր . . . Ասաց Աստուծոյ «Եղիցի լոյս եւ եղև լոյս» ուր Ծննդոց վերջը կ'ուսուցանէ միանգամայն թէ արարչութիւնը վեց օրուան մէջ կատարուեցաւ։ Կը պատմէ Ձայն կարգն որով ստեղծուեցան զանազան էակները։

Երկրաբանութիւնը ժամանեց եւ նոր լոյսեր տնոց այս նիւթին վրայ, ծանօթացնելով երկրագնդին կրած ալիւմինի յեղաշրջումներն ու նա մանաւանդ աստեղագիտական նորանոր խուզարկութիւնները։

Աստուծածաշնչական կամ Երբայական աւանդութեանց համեմատ, Արարչութեան թուականը ժամանակագրաց քով շատ մը պահական կարծեաց առարկայ եղած է։ Տէվինեօլ անուն պատմիչ մը Աստուծածաշնչին վրայ հիմնուող արարչագործական թուականին նկատմամբ միայն 200էն աւելի իրարմէ տարբեր հաշիւներ հաւաքած է։ Երկար ատենէ ի վեր ընդունուած ժամանակագրութեան մը համաձայն, ըստ Իւսերիոսի հաշուոյն, Յ. Ք. 4,000 տարի առաջ ստեղծուած պիտի լինի աշխարհքը, «Թուականները ճշդեղուն արհեստին» հեղինակներուն հաշուով՝ 4363 տարի առաջ, եւ այս կարծիքն ընդունուած է դասական շատ մը դրոց մէջ։ Յունական եկեղեցին 5508, եւ Հրեայք 3483 տարի կը զնեն։

Թող որ հին Հնդկի, Պարսկի, Չին, Բաղդէացի, Եգիպտացի եւ ուրիշ հին ազգեր միլիոնաւոր տարիներով մեծցուցած են աշխարհքին տարիքը կամ ստեղծագործութեան թուականը։

«Տիեզերածնունդ» cosmogonie* (Յունարէն

(*)Մանօթոյք մը։ Մեր համբով ընթերցողները չուարունէ կամ չիտթունէ գերծանելու

«գօզմոս» տիեզերք եւ «չօնօ» ծնունդ բառերէն կազմաւորուած, յօրինուած) անունով կը կոչուին կարգ մը վարդապետութիւնք որք նպատակ ունին աշխարհքին կազմակերպութիւնը, անոր ինչպէս ստեղծուիլ բացատրելու Կան որ կը կոչուին «կրօնական տիեզերածնունդք», ինչպէս են Մովսէսինը կամ Ս. Իրոցը։ Ոմանք ալ «սոստապելական կամ «գիցարանական տիեզերածնունդք»

համար կը յիշեցնենք թէ cosmogonie էն տարիմաստ է բոլորովին նոյնարմատ cosmographie, որ Յունարէն «Գօզմոգ» տիեզերք եւ «չրաֆօ» գրել բառերէն բարդուած է, եւ cosmologie, որ շինուած է գօզմոգ եւ լօղոս (կարգաւ) բառերէն։ Նոյնպէս cosmorama նման տրամա բառը կերտուած է «գօզմոս» աշխարհք եւ «օռամա» տեսք նշանակող հելլէն բառերէն։ Cosmographie «Տիեզերագրութիւնը» մեր աչքին երեւցած տիեզերքին պարզ նկարագրութիւնն է։ որ երկիրն իբրեւ մոլորակ նկատելով, ուրիշ աստղերուն հետ անոր ունեցած յարաբերութեանց վրայ կը խօսի։

Cosmologie «Տիեզերախօսութիւնը» կամ «Տիեզերաբանութիւնը» գիտութիւնն է այն ընդհանուր օրինաց որով կը վարի կը կառավարուի տիեզերքը։ Իսկ cosmorama «Տիեզերահանդէսը կամ «Աշխարհատեսիլը» տեսակ մը diorama է։ զոր Բիէմոնդեցի (Իտալացի) Կաթերան գիտունը հաստատեց կամ հնարեց 1808ին Բարիզի մէջ, Տիեզերքին բոլոր մասանց կամ կողմանց նշանաւորագոյն յիշատակարաններն ու զիրքերը ներկայացնող պատկերներու ճոխ հաւաքածոյ մը կազմելու մօտ։ 1832ին փակուեցաւ «գօզմօրամա» որ այն ատեն կը բաղկանար 260 պատկերներէ։ Փանք dioramaին, պիտի հարցնէ հետաքրքիր ընթերցողներէն մին ալ diorama «Տիւահանդէսը» կամ «լուսնիկն տեսիլը», այս բառը հնարողաց մաքով լուսեղէն տեսիլը, vue de jour, Լատին dies «օր, լոյս» բառէն եւ յոյն oramaէն կազմուած է։ կ'նշանակէ տեսակ մը տեսարանացոյց, որ հանդիսականէն 15—20 մէզը հեռի՝ ուղղաձիգ դուր գետնաշատակի մը վրայ ձգուած եւ բաւական մեծ կակ տարածութեամբ եւ փայլուն թափանցիկ կտաւներու վրայ նկարուած տեսիլներէ կամ պատկերներէ կը բաղկանայ։ Այս նկարա-

ինչպէս են Հեփոդոսի, Հոմերի «գիցածնունդը կամ աստուածածնունդը» (theogonie), Հնդկական Վեդաները, սկանդինավեան «Լոտաները», Պարսկական կամ պարսկական «Ջէնտավէտան», հրէական «Գալլիլէ», եւլին:

Ոմանք ալ կը կոչուին «իմաստասիրական» կամ «փիլիսոփայական տիեզերածնունդը», ինչպէս են հնդկական, չինական փիլիսոփայիցը, Պլատոնինը, Փլինիկեցի Սանգոնիասոնինը, Պլեֆոնինը եւլին: Բոլորն ալ աշխարհքին սկիզբ կը դնեն քառորդ կամ թոհրոնը, եւ կը բացատրեն թէ ինչպէս զառեցաւ, զատուեցաւ, ձեւի, կազմի վերածուեցաւ այս քառորդ՝ այսինքն Աստուածաշնչին «եւ երկիրս

զորդ կտաւ երկը կը մեկուսացնեն իրենց նմանող կամ բաղդատութիւնն եղող ամէն բաներէ, և անոնց եզերքներն ալ աննշմարելի են զիտողին: «Առնաստեփիլին» շահեկանութիւնն է այն տեսարանական հմայքը, զոր կը պատճառէ բնական կամ արուեստական լոյսին խաւը, որ ըստ կամա շրջադիպ կերպով մը հանդիսատեսին աչքին կը պատկերացնէ, ցերեկուան պայծառութիւնը, գիշերուան մթնոտութիւնը, արեւուն փայլումը, լուսնոյ ճառագայթումը, օդային ճառագայթումը, ծիւներու պաղպաղուն սրտազոհները եւ ասոնց նման վիճակին գունագեղ լուսախաղեր: Այս զանազան ձեւացումներն ու տեսիլներն առաջ բերելու համար, երբեմն առջեւի, երբեմն ետեւի կողմէն կը լուսաւորեն տեսարանը ձեւացնող պատկերը. եւ իրարմէ տարբեր կերպով գունաւորուած ապակիներու միջոցաւ կը փոփոխեն լոյսին գոյնն ու խտութիւնը: Panoramajin կատարելագործումն է diorama զոր հնարեցին 1822ին Տիարը Տայեր եւ Բուդոն, Ֆրանսացի գիտունները: Առաջինին անունէն յորինուած է իր ածանցներովն հանդերձ daguerreotype հանրածանոթ բառը, որ կը նշանակէ այն գործիքն որուն միջոցաւ մութ սենեկին պատկերները կը հաստատեն, կը փոխանցեն ու կը հանեն մետաղեայ կտավին վրայ: Տակեր 1841ին գտաւ այս հնարքը, 12 տարիներ չարաչար ու յամառ աշխատանք մը յետոյ, զոր հետզհետէ ուրիշ գիտուններ ալ աւելի կատարելագործեցին, ինչպէս ինքը կատարելագործեց Անդրիայի Թալլօրին եւ Ֆրանսացի Նիքսին հնարած լուսանկարչութիւնը:

էր աներեւոյթ (տճեւ, անկերպարան) և անպարտապարտ (անկապ, անկարգ խառնարանդոր):

Բոլոր այս Աշխարհածնունդոց պատմութիւնը չեն մանրախոնքեր, կամ վեր ի վերոյ ու կցկտուր կերպով կը բացատրեն արարչութեան մեծ գործը, որուն գաղտնիքը պիտութիւնն ի վեր հանած է: Եւ մարդիկ Աստուծոյ ստեղծագործութեան թաքեթաքուրին ո՛րքան աւելի խորամուկ լինին, ա՛յնքան աւելի խելամուտ կը լինին Արարչին տիեզերաստեղծ ամենակարողութեան: Ստեղծապատում բոլոր նոր մասնագրայ մէջ ամէնէն աւելի ժողովրդական լեզուով բացատրողն է սրամիտն եւ հանճարեղն Շատլ Ռիչար, որ իրմէ առաջ նոյն նիւթին վրայ գրող բոլոր ձեռնհաս հեղինակաց տեսութիւնները, կարծիքներն և դրութիւնները սերտած, խաբարած, անոնց պիտական կնճաղից ու բեւեռագրական խրթնալեզու բանաձեւերը կեղեւած մէկդի նետած, յստակ ու մեկին նկարչարանութեամբ խմբագրած է:

Աշխարհքին կամ տիեզերքին ծնունդը պատմել կերպով մը Արարչին դէմ յանդիման գտնուել է, և անոր գործոց գաղտնիքն իրմէն կորզել, ինչպէս ի հնումն Պրոմէթէոս երկնքէն գողցաւ դից արարչագործութեան գաղտնիքը: Եւ սակայն է՛ր այնպէս չլինի, քանի որ Աստուած ի՛նքն է որ իբրեւ առաջին լուծուելիք ծանր ու բարձր խնդիր՝ կ'առաջարկէ մարդուն զինքը ճանչնալ և ճաշել իր վրայ: Եւ գիտութիւնը, իրենց ամենէն աւելի բարձր պաշտօնին մէջ, Արարչին ու իր գործերը ճանչնալէն, ճանչցնելէն աւելի ուրիշ ի՛նչ մեծ նպատակ կրնան ունենալ:

Գիւրահաւան ողիտութեան ժամանակ մը կար, ուր Աստուած ամէն ինչ իր երկու ձեռքերով շինած, չէնցուցած էր: Հասած երբ արդ այն հասուն հասակին կամ դարուն մէջ՝ ուր իր ամենակարողութիւնն այժմ առաւել քան երբեք աւելի լաւ ըմբռնուած, իր օրէնքներով միայն կը գործէ: Երբեմն ինքն էր որ կ'որոտար շանթը, իր թողերէն կ'արձակէր հողմերը, այսօր իր յաւերժական վեհափառութեան մէջ խաղաղ ու հանդարտ, այս տեսակ մէտէօրական կամ օդերեւութական մասնաւոր բաները կ'թողուէր երկարաւ կանութեան ու ջերմութեան՝ որ կ'արտադրեն զանոնք Արարչին նախասահմանած օրէնքներուն համաձայն: Մտերու մէջ լոյսն ո՛րքան

աւելի տարածուի, նոյնքան աւելի ազնիւ ու միտքաւորիչ կը հանդիսանայ Արարչին նկատմամբ զոյացած գաղափարը, եւ իր այս սրբազան ընթացքին համար է որ գիտութիւնը յաշտ ամենուն ճշմարտապէս քահանայապետական հանգամանք մը կ'զգենու:

Կը պատմեն թէ Նարոյէոն Ա. կը հարցնէ օր մը Լաբլասին. ի՞նչու համար իր «Երկնային մեքենականութիւն» մատենին մէջ, գէթ մէկ անգամ, Աստուծոյ անունը չէ յիշած. — Վեհափառ, կը յարէ մեծանուն գիտունը, պատճառն այն է որ այդ տեսակ ենթադրութեան մը պէտք չունեցայ: Այս բառերն անշուշտ չափ անախորժ ու ցաւալի տղաւորում մը կ'սողգեն ամէն լուրի: Սակայն Ռիշար Կ'ըսէ. «Եթէ ես ըլլայի Լաբլասին տեղը, կ'ըսէի. վեհափառ, չտուի Աստուծոյ անունը, վասն զի արդէն չափէն աւելի պայծառութեամբ կը ծառագայթէ այն իմ բոլոր գծած ձեւերուս ու պատկերներուս մէջ»: Զգուշանալու է այս պիտի ստիպարիչ օրինակներէ, որքան ալ բարձրէն գան: Տիեզերքի ստեղծագործումը բացատրելու համար, մեր գրեւիք յաջորդական յօդուածոց մէջ զուտ գիտական ընթացք մը բռնուելուն հետեւանօք, եթէ մի ոք զգածուի Աստուծոյ անունը յաճախ չյիշատակուելուն համար, միանգամ առ միշտ կը յայտարարենք թէ այդ մեծ անունն որ ամէն սրտերէ դուրս կը յորդի, չափէն աւելի փառայեղութեամբ գրուած, ապուած է արդէն տիեզերքը վարող բոլոր օրինաց մէջ, որպէս զի զայն ընդ միշտ կրկնելու հարկ չըլլայ, կ'ըսէ Շ. Ռիշար: Սակայն տիեզերքի գաղտնիքները խուզարկած հետազօտած ասեմ, պիտի կրնայ մարդ յաջողիլ ստեղծագործութեան ամէն բանին վերջին բառը ըսելու: Ոչ ոք կրնայ այնքան յաւակնոտիլ: Մարդ իր ամենէ աւելի յուզող խուզարկութեանց մէջ իսկ կը յանդի, կը հանդիսի իր սուջեւ քաջուած վարագոյրի մը զոր չի կրնար վերցնել:

Մարդուն միակ իրագործելի աշխատանքն է անդադար ընկրկել, ետ հրել այդ վարագոյրն անձանթին մէջ տեղէն. և այսպէս տակաւ առ տակաւ գտնել, ի յայտ բերել այն լուսերը զորս կը ծածկէ վարագոյրը: Բայց որքան ալ մարդ հեռուն հասնի, հաստատապէս պիտի տեսնէ իր առջեւ քաջուած այդ վարագոյրը, նման այն պղնձի մեծ դուռին որ անհունին վրայ կը բացուի կամ կը

նայի:

Ո՛վ եւ ի՞նչ կայ ապա ուրեմն շարժուն այլ մշտնջենապէս անանցանելի այս պատուարին ետեւը, Հոն Աստուած ինքը կայ:

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՀԻՆ ՀԱԽԱՏՔՍ

Երեւելի այն օրերուն որոնց մէջ հարուստ էի հաւատքով: Ազգ. դպրոցը ուր կը յաճախէի՝ վառարանը եղած էր իմ կոյս հոգիւս մէջ սպողեցնելու կայծը կրօնքի տաքութեան: Կը յիշեմ առ օրը ուր առաջին անգամ մեծ սրահ մը մտնուցին զիս՝ ուրիշներու հետ դպրութեան դասը ուսնելու: Ան ատենները ձայն մը ունէի որ բերեղի թրթիռին պէս վճիտ և ազնիւ մեաաղի մը հունչքին նման ցնծուն էր:

Հիւսիս նայող այդ սրահին լուսամուտին մէջ կը շրջանակուէր բնութեան պարզուկ ու նկարչային մէկ տեսարանը. — լերկ տառիառան մը որուն մէջ մշակ մը օրն ի բուն իր բահի տատումը կը շարունակէր մինակը, ու ասդին՝ վիզերնին դէպ ի երկին կարկառուն նոճիներ՝ որոնց ստուերոտ բացասնէրէն կիսով չափ կ'երեւնար դիւղին վանգա կատունը՝ իրիկուրները խորհուրդի ջայլը չրթունքին վրայ. . . :

Ու կ'երգէինք մենք միասերան, աշուրն'ս յառած դաշտանկարին ու վրայի կապոյտին, կ'երգէինք սրտեռանդ, գոյն ու զգացում տալով այն անհունապէս գեղեցիկ դրուագներուն շարականին որ սեւ տախտակին վրայ կախածով նիշուած՝ ուշ ի կուրծս գիտէինք արդէն:

Շաբաթ իրիկուրները կանուխէկ արձաւ կորդ կ'ըլլար, ու մենք կարգ եղած՝ ժամ կ'երկնայինք զուարթագին «Լոյս զուարթ»ը երգելու, վերջապէս փախչող լոյսերուն պահուն կարծես օրուան զովեստը փառաբանելու Գերագոյն Եին:

Գեկտեմբերի առ ցուրտ ամիսին, ուր սուրբերու տօներ իրարու կը յաջորդեն՝ եւ կեղեցի կը վազէինք դեռ լոյսը չի ձեղքուած՝

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԲՈՅՍԵՐՈՒՆ ՏԱՐՐՆԵՐԸ

Բոյսերը կամ տունկերը գործարանաւոր էակներ են, կը սնանին, կը շնչեն, կը զարգանան և կ'արգասաւորուին, բայց ինքնաբերաբար չեն կրնար տեղ փոխել, այլ հողին վրայ հաստատուած կը մնան:

Բոյսերը սովորաբար կը բաղկանան մէկ քանի տարրերէ, որք կը գտնուին ամէնուն մէջ ալ, ինչպէս սննդաբար ցորենին, նոյնպէս ալ թունաւոր մոլիսինդին (ciguë, պալտորան) մէջ: Բնութիւնը բոլոր տունկերը կը շինէ սակաւաթիւ տարրներով, ինչպէս մեք մեր այրուրէնին տաւերով կը կազմենք ամէն տեսակ բաւեր: Այս տարրերէն ու մանք կազային են, ինչպէս քրուածին, ջրածին և բորակածին: Ոմանք ալ հանքային հաստատուն նիւթեր են, ինչպէս բոլաս, սուտ և կիր, զորս քիմիական գործողութեամբ մը կրնանք վերստին դանել մոխրին մէջ, երբ բոյսերն այրենք:

Բոյսերն իրենց այս զանազան տարրները կը քաղեն այն միջավայրէն ուր կ'ապրին. զոր օրինակ, իրենց կազային տարրները, գէթ մեծ մասամբ, կը քաղեն օդէն որ թթուածինն է, բորակածինն և մաս մ'ալ ածխային թթուէն կը բաղկանայ, մաս մ'ալ ջրէն կը ծծեն որ թթուածինն և ջրածինն կը բաղկանայ, իսկ իրենց հանքային նիւթերը կ'առնեն հողէն: Մէկ խօսքով, բոյսերն իրենց սնունդին պէտք եղած տարրները կ'ստանան թէ՛ հողէն և թէ՛ օդէն:

ԲՈՅՍԵՐՈՒՆ ՄՆՈՒՆԴՐԸ

Բոյսերն ինչպէս կը ծծեն և կը նոյնացնեն այն զանազան տարրներն որոցմէ կը բաղկանան. ահա՛ այս ինքիւրը պիտի դառնանք զմեզ հիմա:

Երեք տեսակ գործարաններ կը ծառայեն բոյսերը սնուցանելու, արմատք, ցօղունք, տերեւք:

ԱՐՄԱՏՔ

Արմատներն են որ բոյսերը կը հաստատեն հողին վրայ: Անոնց պաշտօնն է հողէն քաղել պարունակած հանքային տարրները, որք անհրաժեշտ են բոյսին գոյութեան: Արմատները

սովորաբար բազմաթիւ բարակ թելերու կը ճիւղաւորուին որք կը կոչուին մազմզուկ (radicelles) Իւրաքանչիւր մազմզուկի ծայրը կայ տեսակ մը կնգուղ, որոյ մօտ կ'երեւի տեսակ մը աղւաւմազ որ կը կոչուի ծծիչ մազմզուկ: Այս մազմզուկներուն միջոցաւ արմատը կը ծծէ հողին հանքային նիւթերը: Մազմզուկները պատող թաղանթին մէջէն, հանքային հիւթերը կը մտնեն արմատին մէջ և կը խառնուին աւելին հետ, որ բոյսերուն արիւնն է: Ամէնէն հետաքրքրաշարժ կէտը սա է որ արմատին մազմզուկները լո՛կ հեղուկ մարմինները չեն ծծեր, (ինչպէս ջուր, կոյաջուր) այլ և հաստատուն նիւթերը, ինչպէս ոսկորներ և ինչ ինչ հանքային մարմիններ կամ քարեր: Ասիկա դիւրաւ կը հասկցուի, քանի որ յայտնի է թէ արմատները կը պարունակեն թթու մը որ քարերն ու ոսկորները կը մաշեցնէ և կը լուծէ: Օրինակի աղադաւ, քացախն ալ այս կերպով կը լուծէ կուրծք: Այս երեւոյթ ապացուցուած է շատ պարզ փորձով մը:

ՓՈՐՁ. — Մարմարէ կամ ոսկորէ ուղորկ տախտակի մը վրայ քիչ մը աւաղ դրնենք և անոր մէջ բակկայ մը կամ լուբիա մը տնկինք: Երբ արմատները բաւական զարգանան և մինչեւ տախտակը հասնին, անոր մակերեւոյթին վրայ կը տարածուին: Եթէ յետոյ տախտակը լուանք, պիտի կրնանք հաստատուել թէ արմատներն անոր վրայ թուղած են խուռչաւոր դրոշմներ, և թէ հետեւապէս մարմարինին կամ ոսկորին մէկ փոքր մասը լուծուած է մազմզուկներուն պարունակած թթուին ազդեցութեամբ: Բայց արմատները լոկ այս սնուցման պաշտօնը չեն կատարեր. ուրիշ պաշտօն մ'ալ ունին, այն է «կը շնչեն»: Անաւանոց թոքերուն պէս, եթէ ոչ նոյն կերպով, թթուածին կը ծծեն և ածխային թթու կ'արտաշնչեն: Ասիկա այնքան ճշմարիտ է որ եթէ տունկ մը դնենք մեւտաղեայ ամանի մը մէջ, որոյ բոլոր ծակովքը մեղրամոմով կամ կաւով գոցուած ըլլան, պիտի տեսնենք որ շատ չանցած պիտի թառամի, և արմատներուն շնչահեղձութենէն պիտի մեռնի:

ՅՈՂՈՒՆ

Յօղունը բոյսերուն հողէն վեր եղած մասն է: Մասերուն ցօղունը կը կոչուի բուն կամ

կոճղ (trone): Յօղորուն է որ կը կրէ ճիւղերը, տերեւները, ծաղիկներն ու պտուղները: Յօղորուն ու ճիւղերը կը ներկայացնեն երակներու խառնամառն դրութիւն մը, որոյ մէջ աւելը կ'ընէ իր չըջանը, ինչպէս արիւնը՝ կենդանուաց երակներուն մէջ: Այս իրողութիւնը չատ դիւրաւ կրնայ ստուգուիլ: Գարնան, եթէ որթատունկ մը կտրենք հողէն քիչ մը վեր, կտրուածին ծայրը պիտի տեսնենք հեղուկ մը, որ կաթիլ կաթիլ կը հոսի, և կը կոչուի որթատունկին արցունքը: Այս հեղուկ որթատունկին վերքէն հոսող «աւիչն» է: Արմատներէն, աւելը ցօղունին մէջէն վեր կը բարձրանայ մինչև տերեւները: Ասիկա վեր ելնող աւիչն է, որ հողին մէջէն արմատներուն ծածած հանքային նիւթերով և ջրով կազմուած է: Իսկ այն հեղուկն՝ որ տերեւներէն կ'իջնէ մինչև արմատները, վար իջնող աւիչն է, առաջինէն աւելի հարուստ տարրներով կազմուած և աւելի կատարեալ:

ՏԵՐԵՒԻՔ

Տերեւը սովորաբար կը բաղկանայ թերթեակէ մը (limbe) եւ կոթունէ մը (pétiole): Թերթեակը, կամ բուն տերեւ ըսուած մասը կազմուած է երկու բարակ մաշկերէ, երկու վերնամորթերէ, որոց միջեւ կը գտնուի բարակ խաւ մը, որ «ոստայն» (parenchyme) կը կոչուի, եւ ջիւերու (nervure) ցանցեակ մ'է: Տերեւներուն վերնամաշկը ծակոտկէն է, բայց ծակերն այնքան փոքր են, որ մանրագէտով միայն տեսանելի են: Այս փոքրիկ ծակերը կը կոչուին «վտաւիկ» (stomate): Ծակերուն կամ վտաւիկներուն միջոցաւ աւելը կը հաղորդակցի օդին հետ: Աւիչն արմատներէն բերած ջուրին մէկ մասը կը կորսնցնէ, կը թանձրանայ, խտանալով կը ճոխանայ, և վերստին վար իջնելու առեն, սննդաբար տարրներ կը տանի բոյսին իւրաքանչիւր մասին մէջ: Տերեւներուն կատարած դերը հոս չի վերջանար: Գիտենք թէ օդը կը բաղկանայ երկու կազերէ, թթուածինէ եւ բորակածինէ, և թէ կը պարունակէ նաեւ մաս մը ածխային թթու (acide carbonique): Անասնոց շնչառութեան նմանող երեւոյթով մը, որ այս պատճառաւ կը կոչուի «տունկերուն շնչառութիւնը», տերեւները կը ծծեն օդը, բայց տարբարութեամբ դայն: Գիշեր ցերեկ, տունկերը կը ծծեն օդին թթուածինը

եւ ածխային թթու դուրս կուտան: Բայց այս երեւոյթին հետ կուգայ կը միանայ ուրիշ երեւոյթ մ'ալ, որ ցերեկը միայն յառաջ կուգայ եւ կը կոչուի կանաչանիւթային (chlorophyllien) պաշտօն: Այս գործողութեամբ, տերեւները կարտաքսեն թթուածինը եւ ածխային թթուէն կը պահեն ածուխը, որ տերեւին մէջ կը հաստատուի եւ կը կազմէ կանաչանիւթը (chlorophyle), այսինքն բոյսերուն կանաչ նիւթը: Այս երեւոյթ տեղի կ'ունենայ լուսոյ ազդեցութեան տակ: Արդարեւ ամէն մարդ գիտէ թէ նկուղի մէջ զրուած կամ յարգով ծածկուած տունկերը «կը ճերմկանան», ինչպէս կ'ըսուի պարտիզպանական լեզուաւ, այսինքն կ'ոսնին (կը նիւարնան) եւ իրենց կանաչ գոյնը կը կորսնցնեն: Չմեղը բոյսերուն տերեւները կը թափին, որովհետեւ կանաչանիւթը կը պակսի, ջերմութեան եւ լուսոյ ազդեցութեան սակասութեան պատճառաւ:

Վերջապէս, տերեւները գիշեր առեն շարունակ կ'արտաշնչեն ածխային թթու, իսկ ցերեկ առեն ալ ընդհակառակն կը ներշնչեն ածխային թթու, որոյ ածուխը կը պահեն իրենց, եւ թթուածինը դուրս կուտան: Եթէ այսպէս չըլլար, օդն ածխային թթուով պիտի լեցուէր եւ անշնչելի պիտի դառնար մարդոց եւ անասնոց համար:

ՓՈՐՁԵՐ.—Արմատներու ընձիւղումը ուսումնասիրելու համար, կրնանք ջուրի մէջ մակուրթիւն մը փորձել. օրինակի համար, ջրով լեցուն շիշի մը բերանը կրնանք դնել խրեւ խից, յակնիթի սոխ մը, եւ ամէն անգամ որ ջուրը պակսի, կը լրացնենք: Նոյնպէս կանաչանիւթի պաշտօնին վրայ կրնանք փորձ մը կատարել, լոյսէ ու արեւէ զզուրկ տեղւոյ մը մէջ փակելով թաղար մը, որոյ մէջ տնկուած ըլլայ բոյս մը: Պիտի տեսնենք որ բոյսին տերեւները, ածխային թթուէն ըրկուելով տակաւ առ տակաւ պիտի դեղնին ու թափին, եւ բոյսն ալ պիտի չորնայ:

— Այլան, երբ բոյսերուն աւելը վեր կ'ելնէ, զօր ուր որթատունկի մը բարունակը եթէ հողին մօտ կտրենք եւ անոր տեղ ալ պակեայ խողովալ մը անցընենք, պիտի տեսնենք որ ապակեայ խողովակին մէջ աւելի սիւն մը պիտի բարձրանայ, որով պիտի կըրնանք դատել վեր ելնող աւիչին միման զօրութիւնը:

ապակիէ այն նորնոր լապտերովն որ մեզի համար սարքուած կ'ըլլար առաջուրնէ:

Այսօր դաս . . . Այս երկու բառերուն մէջ կը խտանար բովանդակ հրապոյրը մեր ժամասիրիկ տենջանքին: Այրակի օրերը, ձիւնին ու բուքին, կ'ըլլացած կը մնայինք տուններնիս, բայց իրարու խմբուած՝ մեր դըսրութեան փորձերը կ'ընէինք խելօք մը, ներսը կրակին վրայ կերակուրին զթգթալուն, ու դուրսը քամիին հոնդիւններուն ականջ տալով փոխն ի փոխ:

Միտքս կը բերեմ եկեղեցիին պահարանը ուր շունչերնիս կ'առնէինք առտունները և սուր անձառ հրճուանքով մը կ'երթայինք թառիկ մեր գունագեղ «չապիկ»ներուն զոր հասկնուս մէջ մը չափելէ վերջ՝ իրաննուս կ'անցունէինք հապճեպով: Գետոյ կուգայինք չարուիլ դասը հասակի կարգով, սլաքըուն մոմերը ձեռուրնիս, մեր տղայութեան անուշ երաժշտութիւն ձայնձընելու բարի կամարներուն տակ:

Ան ինչ երանելի օրեր անոնք որ անցան անդարձ, եւ որոնց մէջ ճամարտապէս հաւատացեալ՝ մեր մանուկ հոգիներուն դաշն մեղեդին կ'երթայինք մատուցանել տիեզերքը կերտողին:

Երբ Ատեփաննոսին «հաճատակ բարի»ն կ'եղանակուէր կամ Մծրինի հայրապետին «Թաղթող»ը, մեզի անանկ կուգար որ թիկունքնուս վրայ անտեսանելի թեւեր կը բռնանին՝ վեր վեր ամբառնալու, այն աշխոյժ ցայգերգներու պահուն մանուանդ որ «Առաւօտ լուսոյ»ի եւ «Զարթիք փառք իմ»ի գահար քերթուածներն կ'արտաբղին: Տարտամանդերանութեան մը սուրբ հմայքը կար մեր այս յոգնութեան ու վայելումին ալ մէջ . . . :

Թառաղիւթիւնս երթալով կը շեշտուէր ձայնաւորութեան դասերուն: Լման տուն մը երբեմն ինծի երգել կուտար դարապետը՝ ու կը յուզուէի ձայնիս հետ, գրաբառ բառերուն հետ, կարծես ներդգալով համն ամբողջ անոնց կոշտ խմաստին:

Քրիստոնէականի դասին ալ, (որուն տարապայման եռանդով մը սկսեք էի հետեւիլ՝ խմելու իղձով հմտութիւն մըն ալ եկեղեցական պատմութեան), քահանայ ուսուցիչնիս, ներհուն անձնաւորութիւն մը, անձանձրոյթ վայելել կուտար մեզի հրաշքի, սուրբ օրերու

եւ սուրբ վայրերու պատմութիւնը զոր ունէին եկեղեցիս ու կրօնքս, եւ որոնց համայնքը օր օրի աւելի՛ կ'արծարծէր իմ մէջս յափշտակութիւնս համակ՝ մանկունակ միտքիս:

Օր մը պաղ էի առեր. չափիկ չը պիտի կրնայի հագնիլ, ինչու որ ձայնս բռնուած էր: Ասիկա է՛ն դառն զրկանքն էր զոր տարապարտուց կրած ըլլայի երբեք կեանքիս մէջ: Ծնունդի առտուն էր, աս օրուան պէս կը յիշեմ, երբորդ կոչնակին ժամ էի վազած, չնայելով ծնողքիս պատուէրին որ կը դատապարտէր զիս տունը գամուել:

Լոյսերու մէջ ողողուած գտայ տաճարը: Առաջին անգամն էր որ առանց չափիկ հագնելու չէզոք հանդիսատես մը կ'ըլլայի արարողութեանց: Կանթեղներուն խոհուն առկայծումը, բիւր բիւր կերոններու բոցէ լեզուն ու պսպղուն վառքը ջահերուն որ շուրջի բլրեղ պրիսմակներուն հետ իր ցոլի խաղը կը խաղար, յետոյ զմուռսի ու կնդրուկի այն հեշտ բուրբախաւէտութիւնը որ գալար գալար կը ծառանար զոյգ մը ձօճուն բուրվառներէ, յետոյ այն ծանրատրոյփ երաժշտութիւնը զոր բամբ ձայներով կը թնդացընէին աւագ դպիրներ,

«Հովիւք երգեն ընդ հրեշտակս . . . »

Այն մեղմ մրմունջը մանաւանդ որ կը բզգար ջերմեռանդ ամբոխին շրթներէն, այս ամենքը պահ մը մոռցնել կուտային ինծի թէ Աստուծոյ տունն եմ: Մեծ Մսուրին դիմաց կ'զգայի ինքզինքս, մոգերու զմայլանքին ու «բռնիկ»ներու գաղջ շնչաւորութեանը մօտ . . . :

Տաճարին ստուերոտ մէկ անկիւնը կծկւումս, թեւերս ծալած լանջքիս վրայ, լքուն դիրքով մը ականատես կ'ըլլայի այս բոլորին, ունկնդրելով հեշտիւ Մեծ Երախային ձօնուած Օրոր—մեղեդիներուն:

Կ'երգէին ընկերներս, անհամեմատ կերպով բազմա ձայներով որոնց կը խառնուէին քըշոցին տենդոտ թոթուրտուքը ու ծնծղանքուն ծիծաղը անտափէ: Կ'երեւակայէի՝ նըշմարել խունկի կապոյտ ամպիկներէն առկախ՝ բոլը փետուր գուարթուններու որոնք Շնորհը կը մատուակէին մեր քիմքին ու մեր միտքին, և զոգցես իրենք ալ ձայնակից կ'ըլլային մերին ալելուներուն, տատրակի վուզուներով . . . :

* * *

Բայց անցան պատմութեանս այդ մեղքը օրերը, չքեղ անուրջի մը պատիր հոյզը թորելով ամբողջ հոգիին մէջ:

Ձը գիտեմ ինչպէս, լքեցի դստրցը, ու մոռցայ կամաց կամաց «ձայնաւոր» ընկերներս ալ, Քիրզորն ու Սէրջօն, այդ զոյգ մը հոգեղբայրներս որոնց հետ գարունը կը դաշնակէինք խորանին առջեւ:

Ու մտայ բարձրագոյն կրթարան մը: Այլ ինքզինքս կուշտ ու փքուած կը նկատէի կըրօնքէն ու անոր ալ պատմութեանէն:

Գիտութեան ու լեզուի դասերը եկան անոնց տեղը բռներ, և աւելին ըրին, աւելցին վտարեցին ինչ որ կար հինէն սուրբ ու նուիրական:

Ասիկա մահացումն էր ջերմեռանդ հոգիիս: Երթալով կը տեսնայի որ ժամ երթալու մասին տեսակ մը պաղիլ կ'արմատանար մէջս: Ձայնս ալ փոխուած էր, հմայածափ ու աւրուած նուազի մը պէս: Այս կերպարանափոխութիւն կը ցաւէի թէ և, բայց առանց գանդատի, առանց երկրորդ եսիս գայն հաղորդելու: Յետոյ ասուպի պէս կ'անհետանար այս ցաւս ալ:

Օրին մէկը ձեռքս անցաւ դերման հեղինակի մը, եթէ չեմ սխալիր՝ Պիլանէրի գործը: Նիւթին, տիեզերքին ու անանուն զօրութեան մը մասին ճառած էր այս գիրքը գիտական չոր ոճով մը զոր, ափսո՛ս, լրջաւորով կարդալու՝ լաւ չկրցայ մարտել ու ինկաւ միտքս թիւր մեկնութիւններու բաւիղի մը մէջ: Բա՛ն մը որ առիթ տուաւ աւելի՛ մօրանալու իմ մէջս ուժացումս կրօնքէն ու անոր յարակից սրբազան պաշտամունքէն:

«Հակառակ կողմը դարձուր աղօթքի գիրքդ, և թո՛ւէ՛ դէպի անմահութիւն» կըսէր օր մը տիեզերական հանձար մը ինծի: Այս պարբերութիւնը եկաւ ընջովին վանել կրօնքէն դէպի գիտութիւն վաստակած ցուրտ երկբայութեանս ու ջրել բովանդակ պաշարը իմ բարեպաշտիկ զղայումներուս:

Մեծութեանս վայրկեաններուն, երբ արքնութեանս խոնջ՝ իյնայի օրբաթոսի մէջ, կամ բաց օրին՝ ուզէի զմրուխտ բլուրներու վրայ գեգերիլ մոռամիտի, հաճելի էր ինծի սուրբ լով երգելը «սէնէնատ» կամ «ռօմանս» է կտոր մը, բայց յետոյ, չգիտեմ ինչո՞ւ, կը սարուէի յանգիլ եկեղեցական ծուէնի մը՝

զոր ահամայ կը մրմար շրթունքս քան կ'երգէր: Ու բոպէի՛ մը մէջ դէպի անցեալը կ'ոստնուի, այժմու կեանքիս կապար օրերէն այն ոսկի ժամերը թող պատմութեանս որոնց մէջ հաւատքը կար կուրծքիս տակ, տա՛ք ու բարախուն . . . :

Երբեք չեմ մոռնար, ձմեռ գիշեր մը լուսնալու մատ մը մնացած՝ երեկոյթէ մը տուն կը դառնայի Ծուլացեր էի հանուիլ, այնքան քունը աչքէս կը կաթէր՝ ու գացեր էի ընկողմանիլ թիկնաթուի մը մէջ . . . Մէկը ինծի կը ցնցէր բաներ մը կ'միմալով մեղմիւ: Կարծեցի թէ Նուարդն է պնդողը մէկտեղ վալս մը պըրելու: Աչքերս փակ՝ մերժեցի զինքը ու նորէն քունիս սկսայ: Աւտուն միայն կը ռահեցի եղբւրթիւնը, երբ մամաս եկեղեցիէն դարձին կ'աւանդէր զիս՝ իրեն ընկերացած շղլալու՝ Այսօր - Դառքին . . . :

Երթալով մորմօք մը կը խոշորնար ներսս այս բանին համար: Ձանձրոյթը շուտով եկած էր իր սարգի ոստայնը հիւսելու հաւատքէ անանկ սիրտիս պարապին մէջ: Ու աւելի քան երբեք սկսայ տառապիլ:

Երբեմնի գերադանցապէս սրտառուչ երգեցողութեանց տեղը բռնած էին հիմայ գաշնակի վրայ ածուած Պէլլինիի «Նօման», Շօքէնի «Ոքէնիօ»ն, կամ Մէնտէլլընի «Կօնսօրիէ»ն, ու «Գարձ անձն իմ» ի պէս պաշտած ու անով լացած կտորիս տեղ ուրիշ անծանօթի մը «Մարչ ֆիւնէպուր»ն:

Տոհմայինս խլուած էր այսպէս արմատէն:

Ու հիմայ, արրունքի սա տարիքիս մէջ՝ միտքս ա՛լ ծթրած ու ծմրած գիտութեան ցամաք բանաձեւերէն, երեւակայութիւնս լսեմ, ճայրոտ՝ թիւր հայեցողութիւններու այս մշուշէն, նոր բողբ մը կ'ուռի ներսս՝ սիրափս այն օրնաօրեայ փայտացումին հանդէպ զոր խել մը օտար երկեր եկած էին անգլթօրէն իրենց գերը փորձել: Ձէ թէ միայն բողբ մը, հապա ճշմարիտ զի՛ղջ մին ալ, տեսնելով հաւատքիս հնոցին այն հուրը որ ատենով կը ցպրտար հոն, հո՛ւր որուն վրայ մոխիր ցանած էին օտար միտքերու դաւաճանքը յեղյեղուկ, ու աշխարհի՛կ ալ կեանքիս ժամանցները կամչոտ:

Կը լեցուիմ: Յաւը կը կոթտայ դեռ լանջքիս տակ . . . :

ԹԷՈՒՆԿ

Իսախիստար

հիմնական փոփոխութեան մը կամ բախտա-
խնդիր քաղաքականութեան մը, որպէս զի
զինու զօրութեամբ Հանրապետութեան ձեռք
ձգած մեծ ազդեցութիւնն աւելի զօրացնէ
իր դիրքն ու ձեւն անհանդարտ Ֆրանսացի-
ներուն աչքին առջեւ: Ֆրանսայի մէջ պա-
տերազմի համար հզօր կուսակցութիւն մը
կայ, ինչ որ ալ ըսեն չափաւոր Հանրապե-
տականք: Եթէ բանակն ալ տոգորուի նոյն
մտօք, ինչ որ անհաւանական չէ, Ֆրանսա
դարձեալ միշտ անակնկալներու երկիրն է
քսաներորդ դարուն մէջ, եւ 1900ի Տիեզե-
րական Արուեստահանդէսին հսկայ պատ-
րաստութիւնք քաղաքակրթութեան գեղեցիկ
դեղեցիկ բանաձեւներու ներքեւ պիտի չկր-
նան նուազեցնել պատերազմական կամէու-
թիւններն ա՛յդ երկրին մէջ: Վերջին կա-
րեւորագոյն լուրերէն մին է նաեւ Ֆրանսա-
կան սպառազինութեանց եւ նաւատորմի
յաւելման լուրը, քաղաքակրթութեան հաշ-
ուեկշիռը ներկայացնելու պատիւ ունեցող
Արուեստահանդէսին դրան առջեւ:

Երկու մեծ պետութիւնք—Անգլիա եւ Ռու-
սիա—տարակոյս չկայ որ առիթ պիտի ունե-
նան չափուելու—Ծայրագոյն Արեւելքի ջու-
րերուն մէջ—քսաներորդ դարուն: Հարկը
տարուան ատելութիւն Ֆրանսայի հետ, կէս
դարու ատելութիւն Ռուսիոյ հետ, կարծեմ
այս երկու ատելութիւնք կը բաւեն Ֆրան-
սայի եւ Ռուսիոյ մէջ կողմէն եւ միւս կողմէն
Անգլիոյ միջեւ գոտութեան ահագին խնձոր
մը նկատելու՝ զոր վերջապէս սուրիւրը
պիտի կրնան երկուքի՝ ճեղքել: Վերջին
քաղաքական մեծ դէպքը—Հարաւ-Ափրիկեան
մեծ պատերազմն երթալով կը ցուցնէ թէ
ատելութեան սերմերը ժամանակէն շատ կա-
նուխ քողմուխ են ո՛չ միայն ոռու եւ Փը-
րանսական, այլ նաեւ գրէթէ ընդհանուր
եւրոպական մտքերու մէջ ընդդէմ Անգլիոյ:
Մամլոյն մէջ տեսնուած գէշ լեզուն ի նկատ
առնելով՝ ամէնէն միամիտ մարդն իրաւամբ
կը հարցնէ թէ արդեօք շատ սխալ ուղղու-
թեամբ կը քալէ սա՛ Անգլիա որ աշխարհի
ամէն կողմերն իրեն դէմ յարուցած է կար-
ծիքի այնպիսի հոսանք մը որ վերջ ի վեր-
ջոյ բարիք պիտի չբերէ անոր:

Այս ու այնպիսի դասեր միայն կարելի է
քաղել ներկայ քաղաքական դէպքերէն:

Անցեալ շաբթու խօսեցանք արդէն Ամերիկայի
Միացեալ Նահանգաց Նորստացիկ դիրքին
վրայ նոր սկսող դարուն սկիզբը:

* * *

Հարաւ-Ափրիկեան պատերազմը նոր ձախող-
ութեաներու միայն առիթ կուտայ Անգլիա-
ցոյ: Մէկ շաբթուան մէջ ալ շարունակ
գրէթէ կորսնցուցին Ռուսիա զօրք կը հա-
ւաքէ Աֆղանստանի սահմանադիւին վրայ,
այս է նորութիւնը ներկայ պատերազմին
շարժական հաշուեկշիռն մէջ:

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Առ Ա. Լ.

Զեփիւռ մ'արդեօք, լուսնի շող մը առկայծուն,
Բարկ հոսանք մը, եթեքաճեմ եւ կամ ցոլք,
Որ պտուտքի սիրտ-երկինքին տակ յաճուն՝
Ուր կ'առկայծին լոյս թիթեռներ, երկնից
բոյլք:

Յիշատակ մը . . . կայծ մը սրբոյն Մատ-
եանէն,
Խորհուրդ մ'է այն, իբրեւ հըրթիո՛ց ցոլացիկ,
Մեծ անուրջին կ'առաջնորդուինք ներկայէն,
Հոն, կիանք մը կայ այլագունեան ու քաղցրիկ:
Եւ տարիներ սահմանուած են շարունակ
կաղմել հիւսուածք մ'իրենց մըշտին ոլրանքով՝
Նախ ըստուերներ տարտամ, յետոյ խիտ զի-
մակ.

. . . Ու Յիշատակը կաղմուլի անոնցմով:
Յուշն անցեալին, խորհուրդներով առլըցուն,
Կա՛մ զեփիւռ մը, լուսնի շող մը առկայծուն:

ՄԵԼԻՔՈՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՍԻՐՈՅ ԻՏԵԱԼԸ

ԼՈՒՍԻՆ ԿԱՄ ԵՊԵՍՈՒԼԻՆ

Պ

Ուր մէն մի կին Տիրամայրն է եւ մէն մի կոյս՝ Հոբիսիմէ.
 Հոն մանուկը՝ Յիսուս-որդի, մարդերն ամէն Ուրբէ ճարդոյ,
 Հոն է մտքին արքայութիւն. ծառան Տիրոջն հաւատարիմ.
 Ուր հիւծեալ յոյսք, խաչեալ իղձեր ու նահատակ հոյլ հանճարներ
 Փռչ պսակներն անմահի թագ դրած՝ ի գլուխ գահակալին,
 Ուր արժանեաց դափնիք չունին զշարումին ցեցն ու թրթուր.
 Հոն իմ Հուրին յերկին սիրոյս չքնաղաղել մէտէօրա՝
 Գեղեցկութեան իտէալին արեւագալն արշալուսէ,
 Եւ երբ կեանքի ռազմնուխաղմին մէջ պարտասեալ ու կարեւլէր
 Դառնամ յեղեմն իմ սիրաբոյն՝ ուր կարօտս ծուխ կը մխայ,
 Շրթնով սրբէ քրտը ճակտէս, վշտիս ամպերն յօնիւքն աւլէ
 Գոգն ինձ տայ բարձ ու գոգնոցը սիրոյն վերմակ,
 Կրից թոյնի բաժակին մէջ համբոյրն հոսէ նոր թիւրակէ,
 Խանդաղատանքս իրեն բուրվառ, ոյր մէջ հոգին հալուէ հալի,
 Սրտիս բիւր խոց պատռուածքին կուրծքը կարէ նոր կարկտան.
 Սայլակ կեանքիս հեղ լծակից հերկէ, հնձէ ահօսն երկաէց,
 Եւ ի վարի անդ դալարով երբ ա՛լ հանգչինք «փռա՛ծ քրտունք»
 Նէ յիմ հոգւով գոյափոխի գեղն ու սէրը իտէալին,
 Զինչ յՍկիւն հացն ու գինին մարմին, արիւն Անմահ Գառին:
 Զի՛ փոթ ինձ թէ հաւատի դիրտ փարիսեցի կեղծ դպիրներ,
 Որ կը քամեն մեղուկները եւ ուղտերը կը կըլանեն,
 Ոյց աչքին մէջ պիղծն իր գերան ցի՛ց անկած է, չի՛ւղ կ'որոնեն,
 Բառնան կարկաչ, ցեխոտ չրթամբք արատի մուր ծեփ կը քսեն,
 Եւ, իքիմս սիրի կցելի լեզուս ածեալ զ'երկրաւ՝ դնեն բիծ,
 Յ'ստեանց անտի ծծած սիրոյս, սուրբ համոզմանցս հանգանակին.
 Որ թէ անցնին լեզուքն, ազինք, գրախեց յովտ մ'իսկ չի ջնջեր
 Իւր սիրական մեծ սկզբանց տաճնաբանեայ տախտակներէն:
 Բամն'նք բաժակն այլ մեր խաչին վրայ մնանք գամուած Յիսուս.
 Յուրտ լճին մէջ քառսուն-մանուկ կը սառինք մենք այլ կը պաշտենք:
 Աչք չենք թարթեր պոստայօն արհաւիրքին ո՛ւստ ալ պոռթկայ.
 Օրանին մէջ ուսած ենք մենք ճմլել, ճղմլել քարն ու կարիճ,
 Եւ կեանքին ո՞ր ճակատամարտն ո՛ւր ալ լինի մեզ ձայնատուր,
 Մեր սէրը մեզ միշտ թեւ, թիկունք հանդիսանանք բերդն անառիկ.
 Բա՛ւ է լինինք՝ չէ թէ ըսուինք, հաւատարիմ մեր մեծ Տիրոջ,
 Առաքեալը ըսաւ. «Մառայ, քտէրանց ձերոց լերուք հլո՛ւ»:

— Անան, եթէ չաքարեղէնի մը ստորոտը դանակով ճեղքենք, պիտի կրնանք հաւքել վար իջնող աւելն որ շաքար կուտայ: Նոյն կերպով կրնանք քաղել նաեւ եղեւիններուն վար իջնող աւելն, որ բեւեկնի խէժ, ուետ, նային հոյզ, եւ ուրիշ սեւտիւններ կը հայթայթէ:

ԳԻՏԵԼԻՔ. — Տերեւներուն երկու պաշտօնները, որք («ճնշառութիւն») եւ «կանաչանութի պաշտօն» կը կոչուին, երբ այսօրուան պէս չէին հասկցուած, բուսարանք վերջնական արդիւնքը միայն կը հաստատէին ըսելով թէ բոյսերը ցերեկին «թթում» են եւ գիշերն ալ «ածխային թթու կ'արտաշնչեն»:

Այս երկու պաշտօններէն զատ, տերեւներն երրորդ պաշտօն մ'ալ ունին, շատ կարեւոր, այս է «արտաշնչութիւն» (transpiration). վտառիկ (ծակտի)ներուն միջոցաւ, գոլորշիի ձեւով, կ'արտաբերեն բոյսերուն մէջ գտնուած աւելորդ ջուրը:

Արմատներուն ճնշառութիւնը կը նշկատուի իրր յամր կիզում մը (combustion lente) որպէս անասնոց ճնշառութիւնն եւ գործարանաւոր նիւթերուն փտումը: «Բուռն այրում» կամ «կիզում» կը կոչուի այն այրումը որ տեղի կ'ունենայ լոյս արտադրելով ճրագը, կազը, որ կը վառին, «բուռն այրման» (combustion vive) օրինակներ են.

ՏԵՍ. ԵՒ ԳՈՐԾ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՁՈՒԻ

Յօրինեց՝ ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Տարրական ընթացք. — 80 երեւէ բաղկացեալ. կը պարունակէ 31 ընթերցուած եւ 212 հրահանգ, մին քան զմիւսն շահեկան: Գին 2 դրուշ:

Միջին եւ Բ. Բ. ընթացք. — 208 երեւէ բաղկացեալ. կը պարունակէ 30 ընթերցուած, լուսագոյն հեղինակներէ քաղուած եւ 200 հրահանգ: Գին 4 դրշ:

Սոյն երկու Բերականութիւններն իրենց տեսակին մէջ լուսագոյններն են, եւ հետեւապէս ջերմաստիճան կը յամաձայնարարենք Հայերէնի ուսուցիչներուն ուղղութեամբ:

Աղբ. վարժարաններու համար 25 առ հարկը զեղչ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նոր տարին Եւրոպայի համար. — Քաղաքական աշխարհին մտտաւեցութիւնները. — Քաղաքական կեանքի նոր պայմաններ. — Անգլիոյ ազագան. — Ֆրանսայի կացութիւնը:

Առէ՛ք ձեզ դարազուրկ մը որ բնաւ բարեբաստիկ չէ, անբախտ 1900 տարի: Եւրոպայի ոեւէ անկիւնէն չի լուր Ժամն մը խաղաղութեան. ամէն բան պատերազմ կը հոտի: Ֆրանսա կ'սպառազինուի, Ռուսիա թիֆլիզէն ի կեդր. Ասիա կը փութացնէ երկու վաշտ ղինուոր Աֆղանստանի սահմանազիւմի սպանալու, Դերմանիա Եւրոպայի էն հզօր ցամաքային պետութիւնն ըլլալէ ետք, նոր ծրագրեր կ'երկնէ նաւային առաջնակարգ պետութիւն մ'ալ ըլլալու, որպէս զի կարող ըլլայ ծովերէն անդին մրցելու Անգլիոյ հետ՝ իր վաճառականութեան շահուն համար: Ասոնք արդէն բաւական չեն արդարացնելու համար քաղաքական աշխարհի մտահոգութիւնները՝ երբ ահա այսօր հանդիսաւորապէս կը մտնէ նոր դարուն մէջ: Որովհետեւ ինչ որ ալ մտածեն գիտնականք եւ աստղաբաշխք, իրաւունքն հոս ալ վիշէլմ կայսեր կողմն է, քանի որ այնպէս կուզէ որ նոր դարը, քրտաներորդը, սկսի 1900ի սկիզբէն: Ամէն խնդիր վերջ ի վերջոյ քաղաքական հաշիւ մը կը դառնայ, եւ ահա զուտ գիտական խնդիր մ'ալ, դար մը հաշուելու խնդիրը, քաղաքական խնդիր կը դառնայ, երբ Դերմանիոյ կայսրը, Ն. Վեհափառութիւն Վիլհելմ Բ. այնպէս կը կամենայ որ 1900ի սկիզբէն հաշուութի քսաներորդ դարը՝ Ա՛լ կը լսեն գերման գիտնականք, հաշուագէտք, կը խոնարհին բարձրագոյն կամքին առջեւ:

Ահա քաղաքականութիւնը՝ որ կը ոտն զէ իրեն մէջ գիտնական, աստղաբաշխական տրամաբանութիւնն սնդամի Բայց թողունք այս խնդիրը, եւ ծանրանալնք միայն զուտ քաղաքական խնդիրներուն վրայ:

1899 Տարին վերջացոյցինք լոյժ աննրպատա պայմաններու ներքեւ: 1899 ը սկսած էր Պահարարդեան ղինուց չկահիւններով: 1900 ը կ'սկսի ահա ո՛չ նուազ պատերազմա-

կան շահագործող։ Ամենքն քաղաքակիրթ երկիրը — Անգլիա — նոր տարւոյն եւ նոր դարձ մը արշալոյսին կը մաքառի զօրեղապէս, յարին եւ ի սուր մատնելով հին աշխարհի կարեւոր մէկ մասը։ Այսպէս եղած են գրեթէ բոլոր դարազրուիւնները պատմութեան մէջ։ Երբ ժողովուրդները կը մոտենան նոր թուականին մը՝ նոր խաղաղութեան եւ յարատեւ խաղաղութեան մը առաւօտն ողջունելու, յանկարծ չկարծուած պատճառէ մը կը ծագի խառնաշփոթութիւն մը, եւ բաղձանքները կը մնան մեռեալ տառ։

* *

Ինչ որ աւելի կը սաստկացնէ մտահոգութիւնները, սա՛ պարագան է թէ կեանքի պայմաններն ալ փոխուած են հիմա։ Շատ ծախք պէտք է ընել ապրելու համար։ Եւ այս ամէնուն պատճառն է Եւրոպայի քաղաքական կեանքին ներկայ վիճակը։ Մաքնային եւ այլ դրութիւնք հիմնուած են փոխադարձ համակրութեան եւ բարեկամութեան սկզբունքներուն վրայ. եւ որովհետեւ շատ քիչեր բարեկամ են իրարու, կը հետեւի թէ տարօրինակ մաքսեր, անսովոր մեծութեամբ եւ քանակութեամբ, կը հաստատուին ապրանքներուն վրայ։ Կեանքի պայքարն ամէն ժամանակէ աւելի սաստկացած է Եւրոպայի ժողովրդոց մէջ, զորաւորն ու առողջն ունին առաւելապէս դիմանալու, առկալու հաւանականութիւնները, եւ քիչ մը տկարը կը կորսնցնէ անպատճառ կամ կը կորսուի անպատճառ տնտեսական կեանքի պայքարին մէջ։ Շատ քիչ ընտանիքներ կան որք ապրելու համար քիչ հոգ ընեն, անոնք ալ տեսակ մը հինէն մնացած հասարակներ են. եթէ ոչ՝ ժողովրդային մէն մի դասակարգի մտահոգութիւնը կ'աւելնայ՝ աշխարհի ամէն կողմերն ալ միանգամայն՝ թէ ինչպէս պէտք է ապրիլ։ Քանի որ քիչով գոհ ըլլալու սկզբունքն ալ նոյն իսկ գիւղային կեանքին մէջ դադրած է առաքելութիւն մ'ըլլալէ, կեանքի այս պայքար բնական է որ հետզհետէ աւելի դառնանայ, աւելի ծանրանայ եւ հուսկ սպաւ ելմտական, տնտեսական անօրինակ տագնտարներ առաջ բերէ երկրի վրայ։ Շատ հաւանական է այս երեւոյթ։ Մէկ կողմէն քաղաքական աշխարհի մտահոգութիւններն յարաճուն, միւս կողմէ եւ

մտական կամ տնտեսական կեանքի մտահոգութիւնները արտաշուք, նոյն այն քաղաքական աշխարհի ներկայ կազմակերպութեան հետեւանօք, ծանրատաղտուկ բեռ մը նկատել պիտի տան կեանքը, սիրուն կեանքը, բանաստեղծներուն երբեմն երգած անուշիկ կեանքը։

Այս է ահա նկատելի պայմանը կեանքին 1899 թ. անմիջապէս ետքն եւ 1900 թ. սկիզբը։ Ուրիմն հարկւր տարիներու մէջ (1800—1900) շատ լաւ դործ տեսեր է . . . քաղաքակիրթ Եւրոպա, զժողովուրդներով զայն որ ամէնէն աւելի դիւրին եւ դիւրատար պէտք էր ըլլալ, մարդկային կեանքը։ Ահա ճշմարիտ կարծիքը հէք մարդկութեան համար քսաներորդ դարուն սկիզբը՝ ըստ հաշուոյ գերման Վեհ. կայսեր։

* *

Շատ հաւանական է որ քսաներորդ դարուն ապագայ մեծ քաղաքական դէպքերն ըլլան Անգլիոյ եւ Ֆրանսայի կացութեանց ինչ ինչ փոփոխութիւնները մասնաւորապէս։ Իրաւ է որ շատեր պիտի յիշեցնեն մեզ թէ Աւստրիա կը մոռցուի, ուր ցեղային Գերման, Չեհ, Մաճառ եւայլն, եւայլն, խնդիրներ գրեթէ ամէն օր դահլիճներու անկման պատճառ կուտան եւ ներքին անհանդուրժելի վիճակ մը կ'ստեղծեն Ֆրանսիոյ Եւրոպայի կայսեր օրով։ Բայց սա՛ չիտակ է որ աղբայնական կապերն ուժով ըլլալով հոն, վերջապէս այդ ցեղային առեւտրութիւններ կամ խնդիրներ քաղաքական տարքեր կազմակերպութեանց միայն կրնան ծնունդ տալ։ Իսկ Ֆրանսայի համար շատ հաւանական է որ փոխուի նոյն իսկ իր ներկայ կացութիւնը։ Ֆրանսա համասեւ ժողովուրդ մ'է, զուտ աղբային կամ աղբայնացած. անոր մէջ պատահած փոփոխումներ քաղաքական կտրատումներ առաջ չեն բերեր, ինչպէս կ'ըլլայ Աւստրիոյ մէջ օր մը, այլ կը բերեն այնպիսի վիճակ մը որ ընդունելի ըլլայ կամ ոչ՝ ամբողջ ժողովրդեան կողմէ։ Տէրութեան, Պիւֆէի, կամ մէկ խօսքով, վերջին ընդարձակ եւ շահեկան դատաւարութիւնը որ տեղի ունեցաւ Մերակոյտին առջեւ եւ որ վերջացաւ քսանամբ այդ երկու հայրենասէր Ֆրանսացիներուն, կրնայ լոկ յառաջաբան մ'ըլլալ թարմ եւ յետնադոյն իրողութեանց, որք պիտի առաջնորդեն զՖրանսա կամ ներքին

FORGOTTEN HISTORY

OF THE

REPUBLIC

OF THE UNITED STATES

It is a well known fact that the history of the Republic of the United States is a history of the struggle for the preservation of the Union. The struggle has been a long and arduous one, and it is the duty of every citizen to know the facts of the case. The following is a brief summary of the history of the Republic of the United States.

THE HISTORY OF THE REPUBLIC

OF THE UNITED STATES

FROM 1776 TO 1861

The history of the Republic of the United States is a history of the struggle for the preservation of the Union. The struggle has been a long and arduous one, and it is the duty of every citizen to know the facts of the case. The following is a brief summary of the history of the Republic of the United States.

The history of the Republic of the United States is a history of the struggle for the preservation of the Union. The struggle has been a long and arduous one, and it is the duty of every citizen to know the facts of the case. The following is a brief summary of the history of the Republic of the United States.

THE HISTORY OF THE REPUBLIC

OF THE UNITED STATES

FROM 1776 TO 1861

THE HISTORY OF THE REPUBLIC



ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. ՓԻՇԹՕՖՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մասնաճիւղ

11 Գատըղիւղ, փափաղ փողոց 11

Վաճառատունս սլափիւ ունի ծանուցանել Սկիւտարի և Գատըղիւղի յարգոյ ազգայնոց թէ Կաղանղի առթիւ ընտրանօք բերել տուած է ճաշակաւոր կաղանղէքներ և զանազան առարկաներ :

Սոյն վաճառատան մէջ սլափաստ կան նաեւ ամէն տեսակ դըպրօցական սլիփոյք , ձեռագործի տերեւ , ամէն տեսակ թուղթ , թէյ , պաքսիմադ , շոքոլա , հարսանեկան շաքար ևլն :

Գաւառներէն մեծ յանձնարարութիւնք կը կատարուին փութով և ճշտութեամբ : ՀԱՍՅԷ . Կ . Փիշթօֆճեան , Կալաթա , Տէիրովէն խան :



ԱԶՆԻՒ ԸՆԹԵՐՅՈՂ

Կ'ուզե՞ս հեշտիւ խմել

անխառն իւղ Մօռիւ Ձկան

ՀԱՃէ՛ ԴԻՄԵԼ

Կէտիւք—փաշա Պաշի

“ՍՈՒԼԹԱՆԻ՛” ծանօթ Դեղարան

Զոր կը վարէ Լ. Կիւմիւշեան

ՏԱՐՐԱԿԱՆ ԹՈՒԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՄՏԱԽՈՐ ԵՒ ԳՐԱԽՈՐ

Ա. Ե. Բ. Տարի

Յօրինեց Գ. Գալաֆեան

Գ. անդամ տպագրութեցաւ կարեւոր յաւելումներով : Իբրեւ թուաբանութիւն, իր տեսակին մէջ գերազանցէ իր մէթոտով, իր պարունակած գործնական խնդիրներով, ևւ շահեկան գիտելիքներով, յատկապէս Կրթական ծրագրին համաձայն յօրինուած տարրական Գասընթացքներու համար : Կը յանձնարարենք բոլոր թուաբաններու ուշադրութեան Գին 4ուկէս զրոյ. — Կեդրոնատեղի Պալենց Գրատուն :

ԿԱՐԵԽՈՐ ԱԶԴ.—Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատկացուած են : Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ կրնան իրենց ծանուցումները ԶՐԻ հրատարակել տալ 10ական տող, 5 անգամուան համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար :

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ և տարեկան :

ՄԵՐ ՀԱՍՅԷՆ

“Հանրագիտակ,,ի վերաբերեալ ամէն գրութիւն պէտք է ուղղել “Ծաղիկ,,ի Տպարանը, առ Տնօրէնութիւն “Հանրագիտակ,,ի :